

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առօրեայ օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկով.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Հաղորդակցութեան ուղիները. — Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արձագանքներ. Նամակ Խմբա-
գրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին
արդիւնաբերութիւն ունենալ, անմարդա-
րման են և շատ-շատ ծառայում են իբրեւ
արտաներթախանութեան անասնապահների
համար:
Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՀԱՂՈՐԴԱՅՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մենք յայտնել էինք երկաթուղիական հա-
ղորդակցութեան այն ծրագրերի մասին,
որոնք մշակվել են Փոքր-Ասիայի համար:
Այնտեղ արդէն գոյութիւն ունի մօտ հազար
վերստ երկաթուղի ունեցող երկաթուղիա-
կան գիծ, որը պէտք է ճիւղաւորվի և
շարունակվի առաջիկայ տարիներում: Եթէ
իրագործվի Միջերկրային երկաթուղու ծրա-
գիրը, այն ժամանակ Փոքր-Ասիայի երկա-
թուղիները կունենան մօտ 2½ հազար
վերստ երկաթուղիներ:

Երկաթուղիներին մեծ դեր է վերապահ-
ված Փոքր-Ասիայում: Նրանց միջոցով կա-
նոնային հաստատել կանոնաւոր տնտե-
սական կեանք և ազդել վարչական
կեանքի վրա, որը, ինչպէս երևում է, ինքն
իրան երբեք չէ բարեփոխուել այդ երկ-
րում: Երկաթուղիները նոյն իսկ այժմ
կենդանութիւն են մտցրել տեղական եր-
կաթուղիներին և արհեստագործու-
թեան մէջ: Օրինակ, մինչդեռ 1894 թը-
ւին Փոքր-Ասիայի երկաթուղիները արտա-
հանում էին 1½ միլիոն պուլը հացահա-
տիկ, նրանք արտահանեցին 1896 թին ար-
դէն 9 միլիոն պուլը, իսկ 1898 թվին
24 միլիոն պուլը: Անկասկած է, որ երբ
երկաթուղիական ցանցը կը կապի Պարսից
ծոցը Միջերկրական և Մեծ ծովերի հետ,
այդ արտահանութիւնը կը հասնի 50—60
միլիոնի:

Փոքր-Ասիայի լայնարձակ տարածու-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՅՈՒՑԱՆԴԱՅՈՒԹՅՈՒՆ ՐԻԳԱՅՈՒՄ

(Նամակ Րիգայից)

IV

Բոլոր էքսպոնատները մանրամասն նկարա-
գրութիւնը հազիւ թէ ընթերցողների հետա-
քըքրութիւնը չարթէ, ուստի եւ կը բաւակա-
նանամ միայն նրանցով, որոնք շատ թէ քիչ
հասարակական բնութեւնով են կրում: Այդ
տեսակէտից դարձեալ կան հիմնարկութիւններ
առաջին տեղն են բռնում:

Րիգայի պոլիտեխնիկումը *), որ արժանա-
ցաւ Պարիզի համաշխարհային ցուցահանդէսին
grand-prix-ի, ցուցահանել է իր պրօֆէսորների
և ուսանողների աշխատանքները:
Ինժեներական, մեքենայագիտական, քիմիա-
կան եւ ճարտարապետական բաժանմունքնե-
րից ներկայացրած են գլխաւորապէս աւար-
տող ուսանողների գիւյտի համար նկարած
զանազան գործարանների նախագծերը: Այստեղ
կան նաեւ գործարանների արդիւնաբերու-
թեան վերաբերեալ ամեն տեսակ մեքենաների,
գործիքների, կաթսաների, տիւրբինների, ա-
շիւների նկարներ: Աւելի են ընկնում «villa»
Աւորաձ կոչված մի մասնաւոր ամառանոցի,
այսպէս շինարարական կառուցման կամուրջի
եւ մի գերմանական եկեղեցու նախագծերը:
Առեւտրական բաժանմունքից (Handels-Ab-
theilung) շարված են, գեղեցիկ կազմերում ամ-
փովված, գրաւոր աշխատանքներ քաղաքա-
անտեսական եւ ֆինանսական հարցերին վե-

*) Պոլիտեխնիկումի հայ ուսանողների թիւը այս-
տեղ արագ կերպով աճում է և հասնական է այս
տարեկան 50-ից անցնի:

թեան մի նշանաւոր մասը դեռ բոլորովին
ամայի է և չէ մշակվում կանոնաւոր կեր-
պով: Այն հողերը, որոնք կարող էին մեծ
արդիւնաբերութիւն ունենալ, անմարդա-
րման են և շատ-շատ ծառայում են իբրեւ
արտաներթախանութեան անասնապահների
համար:

Այդ հողերը երկաթուղիների շնորհիւ
նորից մշակութեան կենթարկվում և կը
վերականգնեն կեանքը այն տեղերում, ուր
նա մի ժամանակ ետում էր և որոնք ձախորդ
պատմական հանգամանքների պատճառով
մեռելութեան են մատնված:

Այժմ Փոքր-Ասիայի ընդարձակ տեղե-
րում ազդեցականութիւնը չէ կարողանում
իր հողի արդիւնքով իրան ապահովել և
ստիպված է պահելու իր լրացնելու
իր հասոյթների պակասորդը: Իսկ երբ կը
սկսվի կանոնաւոր տնտեսական կեանք և
կը բացվին հաղորդակցութեան ուղիներ
երկրի բոլոր մասերում, այն ժամանակ
ժողովուրդը կարող կը լինի բաւականաչափ
գործ գտնել և եկամուտ ունենալ երկրի
սահմաններում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱՅԱՆՔՆԵՐ

LIII

Ինչպէս դիտել, կան ձիւ գործարաններ,
զաւօ զն եւր: Այդ ինքնատեսակ գործարանների
նպատակն է բազմացնել առողջ, ուժեղ եւ տո-
կուն ձիւներ:

Ի պայման Տէն հին յունական Սպարտան նը-
մանեցնում էր այդպիսի գործարանի: Բարձե-
րը, օրէնքները եւ սովորութիւնները Սպար-
տայում միայն մի նպատակ ունէին—բազ-
մացնել առողջ, ուժեղ եւ տոկուն զինուորնե-
րի սերունդները:

Ամեն ինչ այնտեղ յարմարեցրած էր այդ նը-
պատակին, ուստի եւ զարմանալի չէ, որ այն-
տեղ, երեսայ ծնվելիս, նորածին երեխան
էին ծերունիների քննութեան եւ խնդրում էին

բարեբալ, որոնցով պէտք է կշռել այդ բա-
ժանմունքի ուսանողների մտաւոր զարգացու-
մը եւ ձեռք բերած գիտութիւնների չափը:
Այստեղ դրված է եւ մի լուրջ դաստիարակա-
նաւթային արդիւնաբերութեան մասին:

Գիւղատնտեսական բաժինը, որը ամենից
լիակատարն է բոլոր բաժանմունքներից, դար-
ւել է մի շարք գրքեր եւ բրօշուրներ, նուիրած
զանազան գիւղատնտեսական կնճռոտ խնդի-
րներին, ապա ցոյց են տրվում սերմերի օրի-
նակներ պոլիտեխնիկումին պատկանող Պետեր-
հօֆ ագարակից, պատերից կախված են ցու-
ցակներ հողին ընթացական միջոցներով կազ-
դուրիչ ոյժ տալու մասին եւ ցանքսերի ու տե-
ղական արդիւնաբերութեան մէջ գործածվող
բոյսերի լի ցանկը: Ուշադրութեան արժանի է
բուսաբանական կաթնէտի եւ Րիգայի բնա-
գիտական ընկերութեան հետ միասին կազմած
բոյսերի հարուստ գերաբերումը:

Բայց հազիւ թէ ցուցահանված իրերը բա-
ւական լինեն ձիւ գործարանի տալու պոլիտեխ-
նիկումի բոլոր ճիւղերի իսկական վիճակի եւ
տեխնիկական առաջադիմութեան մասին: Ցա-
ւաք է նկատել ներկայի քիմիական պրէպար-
ատների բացակայութիւնը: Այս հանգամանքը
պէտք է վերագրել մասամբ պարագմունքների
անկանոն ընթացքին եւ ընդհանրվելուն, շնորհիւ
այս տարվայ ուսանողական շարժման:

Նոյն դահլիճում ցուցահանված են Րիգայի եւ
Դորպատի արհեստագիտական դպրոցների նը-
կարները, որոնք փայլուն ապացոյցներ են ա-
շակերտների գեղարուեստական զարգացած
ճաշակի եւ նկարչութեան ու գծագրութեան
մէջ ունեցած հմտութեան: Այստեղ կան աշ-
խատութիւններ գիւյտից, յրաների եւ կա-
ւիճով նկարած, որոնք իրանց նրբութեամբ
գեղեցկութեամբ եւ ընդհանրութեամբ հիաց-
նում են անհնղին, մանաւանդ երբ նկատի

նրան, եթէ քննութիւնն այն եզրակացութեան
էր յանգում, թէ նա վատառողջ է եւ թոյլ:
Զարմանալի չէ եւ այն, որ այնտեղ անզա-
ւակ ամուսնատէր կնոջը կամ վատառողջ ա-
մուսնու կնոջը թոյլ էր տրվում աշխատել զա-
ւակ ունենալ մի հուժկու եւ առողջ տղամար-
դուց:

Սպարտացու աչքում ամուսնութիւնը միայն
մի խորհուրդ ունէր—որդե՞նութիւն պետու-
թեան համար:
Ի՞նչ կասէք, ընթերցող, եթէ ես ձեզ յայտ-
նեմ, որ այժմ մեզանում էլ հաստատվում են
սպարտական հայեացքներ ամուսնութեան վրա:

Այս օրերս ես իմ աչքով տեսայ մի պարս-
կահայատակ հայի արված հրաման, որով նրան
իրաւունք է տրվում, թողնելով կենդանի կնո-
ւն, ամուսնանալ երկրորդ անգամ, որովհետեւ
ամուսնութեան նպատակը որդե՞նութիւնն է
(բերված է Ե. Գրքից «ճանցեք եւ բազմացա-
րուք») իսկ նրանց ամուսնութիւնը անզա-
ւակ է մնացել:

Մենք ապահարգանքի ամենալիցի-
նեցինք ենք, բայց կարծում ենք, որ ապահար-
գանք մի անհրաժեշտ չարիք է եւ պէտք է
տրվի միայն լուրջ պատճառներով, լուրջ քն-
նութիւնից յետոյ եւ, որ գլխաւորն է, ոչ կա-
մայական կերպով: Մինչդեռ այս դէպքում
պատճառը լուրջ չէ, որովհետեւ թէ մեր եկե-
ղեցու եւ թէ քաղաքակրթված մարդկութեան
զարգացած հայեացքով, ամուսնութիւնը ոչ
միայն ֆիզիկական, այլ եւ բարոյական կապ
է, եւ նրա raison d'être-ը միմիայն որդե-
նութիւնը չէ:

Բացի դրանից, եթէ որդե՞նութեան բացա-
կայութիւնը կարող է պատճառ լինել ամուս-
նալուծութեան, նա պէտք է պատճառ համար-
վի ամենքի համար անխտիր եւ ոչ թէ միայն
բացառութիւնների համար:

Վերջապէս, եթէ այս դէպքում իրաւունք
է տրված մարդուն նորից ամուսնանալ, իսկ
կնոջ մասին ոչինչ չէ ասված, այնպէս է դուրս
գալիս, թէ զաւակ չունենալու պատճառը կինն
է, մինչդեռ ոչ մի քննութիւն այդ տեսակէ-
տով չէ կատարված: Այնպէս որ կարող է պա-

էք ասնում, որ աշակերտների մեծամասնու-
թիւնը սովորական հասարակ վարպետներ են
դուրս գալիս:

Րիգայի արհեստագիտական դպրոցը պա-
նում է արհեստագիտական ընկերութիւնը (Ge-
werbeverein), հիմնված 1865 թվին: Նրա
նպատակն է նպաստել արհեստաւորների մտա-
ւոր եւ բարոյական զարգացման եւ տարա-
ծել նրանց մէջ իրանց մասնագիտութեան վե-
րաբերեալ գիտութիւններ: Այդ նպատակները
իրագործելու համար, ընկերութիւնը պահում է
դպրոցներ, գորգարան եւ ընթերցարան, կազ-
մում է ժողովրդական դասախօսութիւններ,
երկրորդներ, ժողովներ եւ այլն: Արհեստագի-
տական դպրոցը բացված է 1872 թվին: Ամե-
նորեայ աշխատանքներից ազատ ժամերին ար-
հեստաւորները եւ բանւորները այստեղ սովո-
րում են օկսած այդ ու ընթերց մինչեւ ֆիզի-
կա, քիմիա, երկրաչափութիւն, ընդգիտու-
թիւն, հաշւապահութիւն, նկարչութիւն, գը-
ծագրութիւն եւ այլն: Պարագմունքները տեղի
են ունենում երեկոյան, 7-ից մինչեւ 10-ը, եւ
դասերը տեղավում, կրկնվում եւ պատրաստ-
վում են հէջը դասարանում: Աշակերտները ընդու-
նում են 14 տարեկանից սկսած, առանց կոսի
եւ ազգութեան խտրութեան: Ուսման դասըն-
թացը 8 տարի է տեւում եւ բաժանված է
երկու մասի. տարրական (I, II, III եւ IV
տարիներ) եւ մասնագիտական (V, VI, VII,
VIII): Աշակերտների թիւը 1000-ի է հա-
նում, ուսումնաւիճարի էժան լինելու պատ-
ճառով:

Արժէ կանգ կաննել նաեւ օրիորդաց ընկերու-
թեան (Jungfrauen-verein) արհեստագիտական
դպրոցի վրա, որի ցուցահանած իրերը բաղկա-
ցած են գլխաւորապէս ձեռագործներից, որոնք
հերթով զննելուց յետոյ հասկանալի է լինում տո-
ւորեցնելու մեթօդի կարեւոր նշանակութիւնը:

տահել, որ զաւակ չունենալու պատճառը հէջ
ինքը մարդն է եւ չը նայելով դրան կամ հէջ
զրա շնորհիւ նա արտօնութիւն է ստանում
նորից պատկանելու Թշուառ կինը, որ անցա-
թուղթը փոխելիս է պատահմամբ իմացել, որ
իրան ու մարդուն բաժանել են եւ մարդուն
իրաւունք են տուել պատկանել, մեզ ցոյց տուեց
մարդու ձեռքով գրված նամակներ,—մենք ճա-
նաչում ենք մարդու գիրը,—որոնց մէջ յիշված
է, որ կինը երկու անգամ երեսայ է փչացրել:
Այդպէս ուրեմն նոյն իսկ չբերքութեան
փաստը հնարված է, եւ ահա այդ հնարված
փաստի հիման վրա, առանց հարցնելու կնոջը,
առանց քննութիւն կատարելու, իրաւունք է
տրվում մարդուն նորից ամուսնանալ:

Մենք մեր պարտքը համարեցինք հրապա-
րակ հանել այս դէպքը, ոչ միայն այն պատ-
ճառով, որ այդ երկինք ազդեցական անարդա-
րութիւն է, այլ եւ այն պատճառով, որ եթէ
այդպիսի կամայականութիւններ կրկնվեն,
պարսից կառավարութիւնը կատարեալ իրա-
ւունք կունենայ խանգարել իր հայ հպատակ-
ների ամուսնալուծական գործերի մէջ եւ մե-
ղաւորը մենք ինքներս կը լինենք ու ամեն
խելօք մարդ իրաւունք կունենայ ասել մեր
հոգեւոր հայրերին՝ «Vous l'avez voulu, George
Dandin!» S. Թ.

ՆԱՄԱԿ ԽՄԱՅՈՒԹՅՈՒՆ

Լաբինսկայա, յունիսի 17-ին

Կարգալով լուծման հանգէնում ունի Ա. Բ.-ի
մատենախօսական անկարգը (Մայրենի խօսքի)
մասին՝ մենք իսկապէս չը զարմացանք հեղի-
նակի բացատրական վերաբերմունքի վրա: Պ.
մատենախօսը, քննելով մեր դատաքիւրքը, կա-
րիք չէ զգուշ յայտնել մեզ, թէ ինչ պահանջ-
ներ ունի նա դէպի մայրենի լեզուի ձեռնարկը,
ինչ ամենակարգական ակադեմիկներ է դաւա-
նում: Նրան չեն հետաքրքրում (Մայրենի խօս-
քի) ոչ ակադեմիկներ, ոչ էլ առաջնորդող գա-
ղափարը: Նա հեղինակաւոր յայտարարում է,
թէ մենք հայերէն չը գիտենք, թէ մենք հայե-
րէնին անհարապառ ճով ողաւաղել ենք հրի-
լովի առաւելների թարգմանութիւնը (Գ. եպ.
Ալվազովսկու) եւ մէջ է բերում հետեւեալ օ-

Ամենահասարակ եւ կոպիտ գուլպա կարկա-
տելուց եւ գործելուց յետոյ, աշակերտունին
աստիճանաբար, աննկատելի կերպով, համուժ
է մինչեւ գեղարուեստական նուրբ գործուածք-
ներին: Ձեռքով հասարակ կարեր կարելուց յե-
տոյ, կատարելագործվում են ձեռքի աւելի
բարդ կարերի մէջ եւ ապա սկսում են մեքե-
նայի կարերը, որտեղ աշխատանքի նրբու-
թիւնը հասցրած է իր գագաթնակէտին: Միա-
ժամանակ սովորում են եւ նկարչութիւն, իսկ
գեղարուեստական ճաշակը զարգացնելու դի-
մաւորութեամբ, ուսուցչուհիները օտարերում են
մի եւ նոյն թէման գործադրել տարբեր պի-
տոյքների համար: Օրինակ «Բերա» կոչված
ծաղիկը կարել գորգի, բարձի երեսի, բազմոցի,
սփռոցի համար: Մի շարք սիրուն աշխատանք-
ներ են շարված միթէլի եւ ապա բարդիստի
վրա կատարված: Այնքա են ընկնում մի կանա-
ցի չապիկ մանր ծաղկաձեւերով եւ երկու
բարձի երեսներ հրաշալի նշանակաւորով:

Կարկատանելու արհեստը հասցրած է այս-
տեղ կատարելութեան: Պավլիտինի պատերից
կախված են վարադոյներ եւ գորգեր, որոնց
վրա կարկատանած տեղերը նշանակված են
գունաւոր թելերով: Այնքա ճեղքող են նուրբ
կարկատված են, որ ուղղակի չէք ուղում հա-
ւատալ, թէ դրանք մեքենայի տակից դուրս
եկած ամբողջ կտորներ չեն, այլ թելի եւ ա-
սեղի միջոցով մարդկային ձեռքերի ճարպիկու-
թեան եւ շնորհի արդիւնք:

Պատարական բաժնում սիւսեմաբար աշա-
կերտունիները գաղափար են կազմում մօի,
խմորի, կաթի եւ դրանց նման արտագրու-
թիւնների քիմիական բնութագրութեան ու գնե-
րի եւ պատրաստելու ու պահելու եղանակի
մասին եւ ապա միայն սկսում ուսուցիչներ
եւ կերակուրութեամբ եւ փիլի: Հետաքրքրական է
հիւանդների կերակուրը: Ինչպէս յայտնի է,

րիակները՝ «Կապիկն մէկը որ ծերացաւ՝ աչքի ոյժը պակսել էր», «այնպէս էլ զարկում ակնոյր քարի, որ փշուր-փշուր իսկայն կտրտի» *), «սէ միայն աչքերը, ատամներն էլ կրակ են ատնում», «գիտեմ, բերանդ որ զովն ատամներդ կը հարկեն»:

Եթէ պ. Ա. Բ. աւելի գրագէտ լինէր, անշուշտ կը հասկանար, որ այս դարձումների մէջ անկանոնութեան ոչ մի նշան չկայ: Նա մինչեւ անգամ չէ իմանում, որ իր բերած ունեւոր ամբողջովին պատկանում են Կրիտիկի առականների հայ թարգմանչին, եւ չի էլ բարեհաճել ստուգել նրանց թարգմանութեան բնագրի հետ կարծած է արդեօք այս վարձուքը բացատրութեան կարծում ենք, ոչ, Բայց, գուցէ պ. Ա. Բ. վստահանայ ուրանալ նոյն իսկ Գ. Եպիսկոպոս Ալվազովսկու հեղինակութիւնը, ինչպէս հայկաբանի:

Ճիշդ է նկատում պ. Ա. Բ., որ մենք ունենք մեր սեփական ճաշակը բանաստեղծութեան վերաբերմամբ, եւ բոլորովին տարբեր ճաշակ, քան իրանը Պ. Ա. Բ. ճախարհագրագետն է համարում Ս. Նազարեանի «Մայրենի լեզուն»:

Նա առում է, թէ ամբողջ Մայր Աւարաբին անարմար է դասաւորութեան համար, թէ Պէշկովսկայնի «Գարունը» մեկնողական ընթերցանութեան նիւթ չէ կարող լինել, թէ Ա. Մատուրեանի «Գարունը» եւ նրա թարգմանութիւնները Վիկտոր Հիւգոյի եւ Լոնգֆելդի չափազանց մեծ պատիւ են արժանացել մեր գրքի մէջ, թէ, վերջապէս, Ա. Անարոնեանի «Փշուրը» ըմբռնողական անտեղի է ընթերցանութեան ժողովածուի մէջ, բայց իր այդ ասածները չէ հիմնաւորում որ եւ անսակեւոր կամ դատողութեամբ: Նա միայն պնդում է առանց որ եւ պատճառաւորութեան: Սակայն մենք ունենք յուրյ պատճառներ, ընտրելով իրեալ օտանաւորները, ինչպէս եւ Ա. Անարոնեանի զեղարուեստական պատմութեամբ: Նրանք, մեր խորին համոզմունքով, իւրաքանչիւր դասագրքի միայն մտքով կարող են լինել շնորհիւ իրանց գաղափարական բովանդակութեան, պատկերաւոր, ստանդարտ, նրանք ներշնչված են բուն զգացմունքով ղէպի հայրենիքը եւ մայր երկրի, ղէպի մայրենի լեզուն եւ բնութիւնը, ներշնչված են ջերմագին կարեկցութեամբ ղէպի թշուառ որբիկները, նեղեալ աքաղաղակները, աշխատաւոր մարդը, մեզ համար անկասկածելի է, որ այսպիսի վեհ տրամադրութիւնները, բարձր գաղափարները դաստիարակում են բալկերտի միտքն ու սիրտը:

Բայց պ. Ա. Բ. աւելի հետաւ է գնում. նա «հակամակարժական» է համարում զբանաստեղծին կցած համառոտ բանգիրը, «որովհետեւ, նրա կարծիքով, հայ աշակերտը բանագրի կարողութիւն չունի եւ նրա օգնութեանը չը պէտք է դնի դասը պատարաստելու ժամանակ, — մոռանալով օտարախօս հայ մանուկներին եւ չըմբռնելով բանագրերի խորհուրդը առհասարակ»:

Պ. Ա. Բ.-ն մենակ չէ մեր ղէմ ուղղված արշաւանքում: Նա ունի իր արժանաւոր գիտակիցը. Թիֆլիսի հայ թերթերի մէկում, որտեղ ապաստան են գտնում կեանքի եւ մարդկանց:

*) Սխալմամբ սպաղարկված է «կը լինի»:

Հաստ հիւանդների հրաժարում են ընդունել անհարաւոր կերակուրների եւ դեղեր: Այստեղ ցոյց են տրվում մի շարք միջոցներ խառնելու դեղերը մեծ, կանաչի, պատեմների հետ:

Գեղարուեստական գործվածքների մէջ հրաշալի են Րիզայի գիտնաշունը եւ մի պատկեր, որը ներկայացնում է քաղաքի հիւր գրեկու մամետար Եպիսկոպոս Ալեքսիի ձեռքով վերջինս լուսանկարի տպագրութիւն է գործում հետուից, բայց կարծած է սպիտակ մետաքսի վրա սեւ թելերով եւ շատ նուրբ գործումը է:

Դպրոցի նպատակն է երիտասարդ ազգական միջոց տալ ապագայում անկախ կերպով մի կտոր հացի տէր դառնալու, գործադրելով դպրոցում ձեռք բերած գործնական գիտութիւնները: Դպրոցը հիմնվել է 1876-ին եւ հաշուում է այժմ 370 աշակերտուհի ու գտնվում է Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի հովանաւորութեան տակ: Դպրոցում աւանդում են — կար ու ձեւ, գործումը, կարկատանք, լուսացն եւ ութուր, մանուկների կրթութիւն Թիֆլիսի մէջ թողնել, ձեռագործ, հաշուապահութիւն եւ խոհարարութիւն: Օրիորդները ընկերութիւնը ունի նաեւ մի միջնորդական բերք, որի նպատակն է աւարտող աշակերտուհիներին համար տեղ ձգել եւ պատուէրներ ստանալ մասնաւոր անձինքներից: Բերքի նախագահուհին միաժամանակ եւ դպրոցի տեսչուհին է:

Վերոյիշեալ ընկերութեան խնամատար եւ բեղմնավոր գործունէութիւնը հասարակութիւնը վարձատրում է թէ բարոյապէս եւ թէ նիւթական առատ նուիրատուութիւններով:

2. Գեղանկար

Ղէմ չարացած շատ բժաշկներ գրչակներ, դաստիարակում է «Մայրենի խօսքը» եւ Ե. Բ. Բ. մանկանցը:

Զարմանալի գրական եւ մանկավարժական գիւտեր է անում այս քննադատը. նա ճանաչում է, թէ թեմական դպրոցի աշակերտները հայերէնից ուսումնասիրելով պէտք չունեն, որովհետեւ «նրանք արդէն գիտեն հայերէն խօսելը», թէ «դասագրքի յօդուածները 10—15 տողից աւելի չը պէտք է լինեն», թէ «ոտանաւորի մաս-մաս անցնելը հակառակ է մանկավարժութեան», թէ Գ. Բարխուդարեանի «Մարդ եւ Հրէշ» հեքիաթը ոտանաւոր է: Բաւական չէ այս. նա կոմիտասի պնդում է, թէ «Պերս Պոպոնիցի լեզուն եւ ոճը ոչնչով պակաս չէ Կոիտի լեզուից եւ ոճից», թէ «մեր նորագոյն տաղաչափական բանաստեղծութիւնը աւելի գերադասելի է իր երաժշտականութեամբ (անշուշտ, այն պատճառով, որ պարունակում է ընդհանուր ըմբռնութիւններ)», քան վախճանական թեմականների մաշված ոտանաւորները:

Դժուար է հակաձայնել այն մարդուն, որ լուրջ կերպով կարծում է, թէ բանագրքը հայերէն խօսելի է սովորեցնում, թէ հեքիաթը ոտանաւոր է: Դժուար է մի բան հասկանալ այն մանկավարժին, որի աչքում յօդուածի տողերի քանակութիւնը աւելի կարեւոր է, քան նրա բովանդակութիւնը, որ «հանրապէս է համարում մեր գրքի երեսին տպված «ձեռնարկ կտտեր» դասարանների համար պարզ խօսքերը, իր թէ «արանք մոլորեցնում են եւ խորհրդափոխում ուսուցիչներին անայտնութեան խաւարի մէջ» եւ որ անպէտք է համարում այն ոտանաւորը, որ մի դասում չէ կարելի անգիր սերտել:

Բայց արանգով էլ չեն սպառնում քննակող (КРИТИКАНСТВОЮЩІЙ) պարտի անհիմն Նկատողութիւնները նա բացատրում է, որ ժանրը «գաղանկ տալիս» է, հրէշը «անսովոր կենդանի» (ЧУДОВИЩЕ), անաղատ «մաքուր, պայծառ» է, ձէլը «ճարպիկ», առանց «անցք», լինելու է եւ այլն, եւ բացատրում է՝ յանդուգն աշակերտի օտանաւորութեամբ, առանց կանխօրէն ստուգելու մեր բացատրութիւնները բանարարութեամբ (տե՛ս. հայկ. բառ):

Այսքան մտաւոր-բարոյական պայար եւ քննադատել. մի փոքր խնայելով ընթերցողներին եւ բազմաշարք հայ գրականութիւնը...

Չէ, քննադատող պարտնէր, ձեզ հետ լուրջ վիճել եւ աւելորդ է անօգուտ, որովհետեւ ձեր գրութիւնների եղանակը օտար է ղարբուն եւ գրականութեան չափերին, որովհետեւ... «ВСЯКЪ КУЛИКЪ ВЪ СВОЕМЪ БОЛОТѢ ВЕЛИКЪ»:

Ի վերջոյ պէտք է աւելացնեմ, որ այս կարծ պատահաբան սուղատ, որովհետեւ պ. Ա. Սարգսեանը, որի մեծ միտքին կազմել ենք դասագիրքը, ղէմ էր եւ ղէմ է որ եւ ուղարկութիւն դարձնելու այդ Եպիսկոպոսի չարամտութեամբ գրված յօդուածներին: Սակայն ինձ թւում է, որ բոլորովին անպատասխան թողնել նշանակում է թոյլ տալ մոլորեցնել ընթերցողներին, ուստի հարկ համարեցի այս մի քանի դիտողութիւններով պատասխանել այդ քննադատ-մանկավարժներին:

Կար. Կուսկիանց

ԲԱԳՈՒԻ ՆԱԹԱՐԴԻԻՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ
1900 թիւին

II *)

Նաւթային արդիւնաբերութեան գործը սերտ կապված է «աշխատանք» դործադրողների՝ ծառայողների եւ բանւորների վիճակի հետ: Տեսնենք, ինչ է ներկայացնում դրանց այդ վիճակը անցած տարեկանում:

Նաւթարդիւնաբերող 167 ֆիրմայում ծառայողների եւ բանւորների թիւը ներկայ 1901 թ.ի սկզբին հասնում էր 26,63-ի. համեմատելով անցած 1900 թ.ի հետ, երբ նոյն այդ ծառայողների թիւը եղել է 21,253, կը տեսնենք, որ ծառայողների եւ բանւորների թիւը մի տարվայ ընթացքում աճել է 5384, կամ 25,30%-ով:

1) զրանցից ուսանողներ	5220,	կամ	18,60%
2) Կովկասի զանազան ցեղերից . . .	13,554	կամ	50,90%
Կովկասեան ցեղերից			
առաջին տեղը ընում են հայերը . . .	7,157		
երկրորդ տեղը լեզգիները . . .	3,409		
երրորդ տեղը տեղական թուրքերը . . .	2,761		
չորրորդ տեղը վրացիները . . .	165		
մնացածները՝ օս, ինգուլ, չէչէն . . .	72		

Ընդամենը . . . 13,534

3) Ռուսաստանի զանազան ցեղերից 2,076 կամ 7,80%:

Սրանց մէջ առաջին տեղը ընում են Կազանի թաթարները . . .	1,743
երկրորդ տեղը հրէաները . . .	142
երրորդ տեղը լեհները . . .	107
մնացածները՝ մորդու, շվէդ, ֆին, լատիշ . . .	84

Ընդամենը . . . 2,076

4) Օտար երկրացիներ 5,787 կամ 21,70%
Սրանց մէջ առաջին տեղը ընում են պարսիկները . . . 5,485

*) Մշակ № 143.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիս, յունիսի 6-ին

Մեր երկու նամակները հայոց թատրոնի մասին առիթ տուին թատրոնական ասպարէզում գործող նշանաւոր ոյժերին պատասխանելու, որոնց մէջ աչքի է ընկնում տ. Սիրանոյի նամակը: Երբեք հեղինակը իր նամակում ողբալով հայոց թատրոնը՝ իր յոյսը դնում է հարկի հազարների տէր մարդկանց հազարների վրա եւ նշանակութիւն չէ տալիս փոքրիկ գումարներին, որոնց մէջ իրը չէ կարելի փնտռել բնական փրկութիւնը: Օգտվում եմ ղէպից խօսելու հերթական կարեւոր հարցի մասին եւ պարզելու, թէ ինչպէս կարելի է առանց յոյս դնելու ուրիշ տեղ գործիւն ունեցող կառավարչական նպաստների կամ հազարների տէր մարդկանց վրա՝ մեր բնակի գոյութիւնը պահպանել:

1) Ինչպէս չէ կարելի հիմնել մի ժողովրդական ընկերակցութիւն, այնպէս, ինչպէս արդէն կազմվել է Թիֆլիսում իշխանուհի Մ. Թուանեանի նախաձեռնութեամբ, եւ փայտի գները նշանակել փոքր կամ չփոքր մեծի գումարներ, ինչպէս արդէն արված է, 25 եւ 100 ռուբլի, այս ձեւով գոյացած 5000 ռ. շատ բաւական է: 2) Եթէ մեր առաջնակարգ բնական ոյժերը, որոնք սերտեց ղէպի մայրենի բնակ, մի փոքր չափաւորեն իրանց վարձատրութեան գումարները, եւ չը մասնեն ստանալու մասնական 200 եւ նոյն իսկ 400 ռուբլի եւ աւելի, կարող էին յայտնի չափով նպաստել գործին: 3) Սեզոնի ընթացքում տալ մի ներկայացում յատկապէս ֆոնդի օգտին — մեր հարեւան վրացիների նման — եւ մի եւ նոյն ժամանակ, եթէ օգտվենք այնպիսի ղէպերից, ինչպիսին էր «Պէպո»-ի 30-ամեակը եւ է Պ. Աղամանի մահվան 10-ամեակի տարեդարձը, տալով այդպիսի տոներին հանդիսաւոր ներկայացումներ յատկապէս բնակի օգտին, կը տեսնենք, որ շատ էլ զարմանալի չէր թուալ որդրման գումարներով ապահովել մեր բնակ գոյութիւնը, մանաւանդ որ մեր ասածներից ոչ մէկը անկարելիութիւններ չեն եւ շատ հեշտ գրուել բերելու միջոցներ են:

Մենք անշուշտ որոշորովին հաւատում ենք յարգելի տիկնոջ, թէ «Պէպո» ներկայացումներից զուտ արդիւնք քիչ է մնացել, սակայն թոյլ ենք տալիս մեզ կարծելու, որ եթէ նախապէս ծրագրված, որովհետեւ եւ յայտարարված լինէր, որ մուտքի մի մասը թատրոնական ֆոնդին է յատկացվելու, (մենք իրաւունք ունենք այսպէս գրելու, որովհետեւ մեր յօդուածում էլ հէնց այն միտքն է արծարծւած, որ ժողովրդը գիտնար, թէ այդ ներկայացման մուտքի մի մասը գործադրվելու է բարեգործական նպատակով), կարելի էր սպասել պատկանելի հասոյթներ:

Ինչ վերաբերում է օր. Վարդուհու եւ պ. Տէր-Դաւիթեանի պատասխաններին, մենք ոչ չինք չունենք ասելու, որովհետեւ նրանք հաստատում են մեր նամակում գրածները: Իսկ ժողովրդական թատրոնի օգտին ներկայացման համար ոչ թէ մենակ մենք էինք աշխատում. այլ հայոց սեկկիան, ուր անդամ լինելու պատիւը մենք էլ ունէինք անցնալ 1900/1901 թ.

երկրորդ տեղը՝ գերմանացիները . . . 245	
երրորդ » չեխներ . . . 23	
չորրորդ » անգլիացիներ . . . 16	
մնացածները՝ ֆրանսիացիներ, բուլղարներ, խորվաթներ, յուններ, ղանիացի, իտալացի եւ սլովակներ . . . 18	

Ընդամենը . . . 5787

Ըստ աշխատանքի տեսակի՝ զրանք բաժանվում են՝

1) Վարչական մասում . . . 460 կամ 1,70%	
2) Գրասենականութիւնում . . . 416 » 1,6 »	
3) Արհեստանոցներում . . . 5,713 » 21,1 »	
4) Հորեր փորելու մաս . . . 6,715 » 25,2 »	
5) Նաւթանքներում . . . 11,585 » 43,5 »	
6) Մշակական այլ ծառ . . . 1,743 » 7,9 »	

26,637

Հետաքրքիր է, թէ ինչ ազգութիւնից որքան հոգի ինչ գործերով են զբաղվում:

1) Վարչական մասի մէջ առաջին տեղը բռնում են հայերը՝ 223, յետոյ ուսանողներ՝ 99, հրէաները՝ 25, գերմանացիները, լեհները, վրացիները՝ 18-ական եւ այլն:

2) Գրասենականութիւնում ծառայողներ՝ զարձակ հայերը — 192, ուսանողներ՝ 96, հրէաներ՝ 34, լեհներ՝ 27, վրացիներ՝ 21, գերմանացիներ՝ 12 եւ այլն:

3) Արհեստանոցներում առաջին տեղը բռնում են ուսանողներ՝ 2543, հայերը՝ 1940, պարսիկներ՝ 379, կազանի թաթարներ՝ 276, լեզգիներ՝ 143 եւ այլն:

4) Հորեր քանդելու մէջ առաջին տեղը բռնում են լեզգիները՝ 1833, յետոյ պարսիկներ՝ 1801, յետոյ տեղական թուրքերը՝ 1422, յետոյ հայերը՝ 925, յետոյ ուսանողներ՝ 474, յետոյ Կազանի թուրքերը՝ 123 եւ այլն:

5) Նաւթանքներում՝ աւելի սեւ աշխատանք ունեցողները՝ առաջին տեղը բռնում են

սեղանիս: Նամակների մնացած կէտերը, որտեղ յօշակում են մեր անձնատուրութիւնը, իբրեւ ոչ հետաքրքիր՝ թողնում ենք անուշադիր եւ անպատասխան:

Կ. Շիրինեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անդրկովկասեան երկրի հետեւեալ տեղերը, որոնք գտնվում են նրա զանազան նահանգներում, նշանակված են բացառապէս ուսուցող-թականների բնակութեան համար. մի եւ նոյն ժամանակ երկրագործութեան միջոցաւ յայտարարում է, որ այդ տեղերում այլ եւս մասնաւոր հանքագործութիւն չէ կարող տեղի ունենալ: Բազուի նահանգի Դուբայի գաւառում ուսուցող-թականներին յատկացրած են — Ատամ-խան, Գիւլիկ Պոկոս, Կատալեւսկի Պոկոս, Շամախու գաւառում — Բեօհնա-Թուգան, Երեւանեան նահանգի Նոր-Բայեռադէթի գաւառում — Սուրբ-Տօր եւ Խաչ-Մարիամ — Աստուածածին. Գանձակի նահանգի Զիւլաշիքի գաւառում — Զան-Սաթաղ, Շահար-Երի, Գանձակի գաւառում — Զուգուլէ-Երի-Աթաբէկ, Գոնջա, Խան-Իւրտ, Կիզիլ-Փայեա, Բեօհնա-Շահար, Համա-Չայ, Մանանց, Զայի-Գիւլ, Բինադ-Թայա, Դիւզ-Իւրտ եւ Խաչուլայի մասի արքունի լեռնային արտոններից կազմված մի քանի տեղեր, Շուշու գաւառում — Կուլար-Երի, Վերին-Խոջալու, Լիւնգորսկ եւ Խանաչիի գարնանային եւ անաւային արտոններից կազմված մի քանի տեղեր. Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գաւառում — Բիւրանչայի, Աղբաւայի, Դուբի եւ Աշուլ-Սամսարի ամառային արտոններից կազմված մի քանի տեղեր՝ Խոմբիս, Կարա-Կուսէյ, Մազարա-Դարասի եւ Մազէզա:

1902 թ.ին պէտք է տեղի ունենայ Կայսր Ալեքսանդր III-ի անուան մրցանակաբաշխութիւնը գինեգործութեան եւ այգեգործութեան համար: Մրցանակը երեք հազար ռուբլի է, որ տրվելու է ամբողջ Ռուսաստանի (բացի Կրիմի հարաւային ծովափից՝ սկսած Լապտիցի մինչեւ Թէոօսիա) սեփական այգիների բնական եւ շաքար ու սպիրտի խառնուրդ չունեցող գինու համար: Մրցելու ցանկութեան մասին պէտք է յայտարարութիւն ուղարկել երկրագործութեան ղէպարտամէնտին մինչեւ 1902 թ. փետրվարի 1-ը, կցելով օրոշ ծրագրով տեղեկութիւններ այգեգործական տնտեսութեան մասին: Ցանկացողներին, պահանջելու պէս, երկրագործութեան միջնորդութիւնը ուղարկում է մրցանակաբաշխութեան կանոնները:

Դարսի նահանգի գինուրակային նահանգապետը միջնորդութիւն է յարուցել Կովկասեան

հայերը՝ 3,550, յետոյ պարսիկները՝ 3,163, յետոյ ուսանողներ՝ 1637, յետոյ լեզգիներ՝ 1188, յետոյ տեղական թուրքեր՝ 1054, յետոյ Կազանի թուրքեր՝ 817 եւ այլն:

6) Մշակական այլ ծառայողներից առաջին տեղը բռնում են Կազանի թուրքերը՝ 518, յետոյ ուսանողներ՝ 371, յետոյ հայերը՝ 327, յետոյ լեզգիները՝ 241, յետոյ պարսիկներ՝ 140 եւ այլն:

Բացի վերոյիշեալ նաւթարդիւնաբերողների ծառայողներից եւ բանւորներից կան եւ ուրիշ առանձնակի արհեստանոցներ, ուր չինվում են երկաթէ խողովակներ քանդվող հորերի համար, ժալոնկաներ՝ հորերից նաւթ դուրս քանելու համար եւ այլն եւ այլն:

Այդպիսի մօտ 50 ֆիրմա կայ, որոնց ծառայողների եւ բանւորների թիւը հասնում է 5409-ի: Սրանցից առաջին տեղը բռնում են պարսիկները՝ 1373, յետոյ տեղական թուրքերը՝ 1119, յետոյ հայերը՝ 1091, յետոյ ուսանողներ՝ 820, յետոյ լեզգիները՝ 469 եւ այլն:

Ուրեմն նաւթանքների ծառայողների եւ բանւորների թիւը ներկայ 1901 թ. սկզբին կազմում է 26,637+5409=32,046:

Բացի արանցից կան եւ մանր կապալառուներ՝ հիւանդներ, հողային աշխատանքի, քարի եւ այլն, որոնց մօտ աշխատում են մօտ 1000 մարդ, սակայն թէ աշխատաւորների թիւը հասնում է 33,000-ի. իսկ 1900 թուականի սկզբին եղել է 28,000, այսպիսով մէկ տարվայ ընթացքում զրանց թիւը աւելացել է 5000-ով կամ 17,80%:

Այս դեռ միմիայն նաւթահանքերի չրջանում գտնվածները: Իսկ ինչ վերաբերում է գործաւորաներում գտնվածներին, այդ մասին յետոյ, երբ խօսքը կը լինի գործարանների դրութեան եւ նաւթի արտահանութեան մասին:

Ն. Դաւթեան

գլխավոր իշխանութեան առաջ, որ Արդարաւոր չըլլանի Դադարմանքի գիւղի հասարակութեան, որ վաւարի է յունիսի 14-ին այդ գիւղում եկած կարկուտից, փոխարինարար 4000 բոլորի տրվի չըլլանի օժանդակ դրամարկի պահանջի դրամագլխից: Փոխադրութիւնը խնդրող լուծ է 5 տարի ժամանակամիջով, որի ընթացքում գիւղացիները պէտք է վճարեն 40/0:

Ախալցխայից հեռագրում են «Արդաւոր» լրագրին յուլիսի 4-ին: «Այսօր կէսօրին Ախալցխայում եւ նրա շրջակայներում ամենաստատիկ փոթորիկ բարձրացաւ եւ կարկուտ տեղացաւ, որ տեւեց 35 րոպէ: Կարկուտը աղանու եւ հաւի ձուերի մեծութեամբ էր: Իսպառ ոչնչացան պարտէզները, բոստանները եւ բանջարանոցները: Պարտիզպանութեամբ ապրող խեղճերի վիշտը աննկարագրելի է: Կարկուտը մնաց մինչեւ երեկոյց:

ԳՕՐՈՒԾ մեզ գրում են. «Երեւանի թեմական դպրոցի տեսուչը, բժիշկ Տատեան, ամառվայ արձակուրդներին այստեղ լինելով, մբտադիր է մի քանի բժշկական դասախոսութիւններ կարդալ, որի համար նա արդէն թոյլտուութիւն է ստացել Առաջին դասախոսութիւնը, որի նիւթն է երեխաների հիւանդութիւնը, տեղի կունենայ կիրակի, յուլիսի 15-ին»:

ԱՆՍԼՔԱՆԱԳԻԹ մեզ գրում են. «Եղլիւրաւոր անասունների ժանտախտը քաղաքում վաղուց վերջացել է եւ այդ պատճառով քաղաքը սկսել է ազատ յարաբերութիւններ ունենալ գաւառի գիւղերի հետ: Այստեղից գիւղում այդ հիւանդութիւնը նոյնպէս վերջացել է, բայց Խոսրիսի արօտատեղերում դեռ չարունակվում է: Ժանտախտ երեւացել էր եւ Գէօկ-դաղում, Դիւիկա գիւղի արօտատեղերում, բայց առաջն աւելում է: Սակայն Խոսրիսի ժանտախտի պատճառով գաւառը անբարեբաղդ համարվելով այդ տեսակէտից՝ դեռ կտրված է չըլլալայ գաւառներից»:

ՂՈՒԲԱՅԻԹ մեզ գրում են. «Թուլիսի 1-ի երեկոյան Ղուբայի հասարակական ժողովաւանի զանգեղում մի քանի հայ օրիորդներ առաւ սրբորդների հետ մի ներկայացում տուին ուսերէն լեզուով. խաղացին «Сердце» պիէսը, յետոյ երկու բաժանմունքներով կոնցերտ տուին. վերջում տեղի ունեցան պարեր, թատրոնի դաշինքը ամբողջովին լինել էր, մուտք եղաւ 123 րուբլի, որից ծախքը դուրս գալով, մնացորդը, մօտ հարիւր րուբլի, յատկացրին տեղական բարեգործական ընկերութեանը: Միւս ներկայացումը կը լինի կիրակի, յուլիսի 14-ին»:

Չանդեզուրի գաւառի ԽՆՁՈՐԵՍԿ գիւղից մեզ գրում են. «Մեղնում ամառամուտը սկիզբն առաւ օրերով եւ մինչեւ այժմ շարունակվում են նոյն յոց եւ տօթ օրերը: Մօտ մի ամիս կը լինի, որ մի կաթիլ անձրեւի կարօտ ենք: Դաշտերում եւ արտերում բանտները եւ հնձողները չոգից մեծ նեղութիւն են կրում: Այսպիսի վատաբերող եւ տօթային օրերում մեր գիւղում յայտնվել է երեխաների (ներածին) մինչեւ 13 կամ 14 տարեկան) տաւրափոխիկ հիւանդութիւն. ճիշտ այն հիւանդութիւնը, որ երկու, երեք ամիս առաջ Գորիսում մեծ վնասներ տուեց: Բզացաւ հետ միասին՝ երեւան եւ գալիս երեխաների վրա ուռուցք եւ կարմրութիւն. տաքութիւնն էլ հասնում է երբեմն 40 կամ 40½ աստիճանի: Գանի գնում աւելի ու աւելի բազմանում է զոհերի քանակութիւնը. մինչեւ այժմ ոչ մի բժիշկ չէ այցելել մեր գիւղը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐԱՆԱԳՐՈՒԹԻՆ

Բերլին, յուլիսի 7-ին

Ամբողջ տարի ու կէս է, որ հարաւային Աֆրիկայում անդադար զենքերի չափն է լսվում, անմեղ զոհերի արիւն է հոսում: Մի կողմ կանգնած են ազատութեան համար նախապիտոյ բոլորները, միւս կողմը՝ հզօր Անգլան, մի կողմը՝ արքայութիւնը, միւս կողմը՝ օղի իրաւունքը, իսկ քաղաքակիրթ Եւրոպան՝ կարծես աչքերը խփելի, ակնայնորէն փակել է: Օրպէս զի անուշադիր թողնի այդ անհասարակ վատաբերող եւ ստիպված չը լինի մարդասիրական մի գործ կատարելը...

Ճիշդ է, ամբողջ հասարակութեան համակարգը բոլորների կողմն է, ճիշդ է, նրանց

մասին անթիւ անհամար դժուարներ են տրվում լրագիրներում, միտնդներ են տեղի ունենում զանազան քաղաքներում, բայց ինչօգուտ այդպիսի պատմական համակարգից, ինչ թեթեւութիւն արիւնաշաղախ Տրանսվաալին ու Օրանժեան հանրապետութեանը:

Բազմաթիւ են եւ բօքրական հերոսութիւնը գրուածող գրքերը, բայց դրանց մէջ առանձին ուշադրութեան արժանի է նորերս լոյս տեսած գերմաներէն մի եռահատոր աշխատութիւնը. («Die Geschichte der südafrikanischen Respublik Transvaal» — Հարաւային Աֆրիկայի Տրանսվաալ հանրապետութեան պատմութիւնը), որ պատկանում է չափաւ կապիտան զօլտոր Վալլենտին գրչին:

Դոկտոր Վալլենտին հինգ երկար ու ձիգ տարիներ պաշտօն է վարել Տրանսվաալում, մանրակրկիտ կերպով ուսումնասիրել է երկիրն ու ազգաբնակչութիւնը, տեղական բարքերն ու կարգերը, ուստի եւ նրա այս աշխատութիւնը լի է ճիշդ ու հետաքրքրական տեղեկութիւններով:

Վերջինքը նմուշներ: Ինչպէս յայտնի է, պատերազմի սկզբից մինչեւ վերջին ժամանակները անգլիացիներն աշխատում էին հաւատացնել, թէ բօքրական զորքի թիւը հասնում է 60,000—80,000-ի:

Սակայն Վալլենտինի առաջ բերած թիւերը բոլորովին այլ բան են ցոյց տալիս: Այսպէս 1899 թ.ի սկզբում Տրանսվաալում եղել են—166,400 տղամարդ եւ 122,350 կին:

Պէտք է չը մոռանալ, որ տղամարդկանց մի զգալի տոկոսը օտարերկրացիներ են եղել, այնպէս որ նոյն թւականին Տրանսվաալի բնակիչներից զէնք կրելու ընդունակ են եղել ընդամենը 27,279, այն է 15,696 հոգի 18—34 տարեկան հասակում, 9050—34—50 եւ 4533—18-ից ցած եւ 50 բարձր:

Դրա վրա եթէ աւելացնենք նաեւ Օրանժեան հանրապետութեան զինակիրների թիւը՝ կը ստանանք ամենաշատը 40—50,000, այսինքն ցոյց տուածից զբեւէ երկու անգամ քիչ:

Այդպիսի չափն ոչ միայն Անգլիայի նման մի հզօր պետութեան դէմ մղեցնելու համար, ճիշդ որ, մեծ հերոսութիւն է հարկաւոր: Եւ բօքրներն ամբողջ աշխարհին ցոյց տուին այդ չը տեսնված հերոսութիւնը...

Ուստի ընդհանրի կրթութեան մասին, Վալլենտինի ցոյց է տալիս, որ մինչեւ 1890 թ. նրանք շատ տնտեսական լիճակ են ունեցել: Երջիկ ուսուցիչներից շատերն իրանք զուրկ են եղել ամենատարրական կրթութիւնից, 1891 թ.ին կառավարութիւնից ռոճիկ ստացող 538 ուսուցիչներից միայն 105-ն են պատշաճաւոր վկայագրի ունեցել: Սակայն ձեռք առած միջոցների չնորհիւ, այդ վիճակը հետզհետէ բարեւոքել է, այնպէս որ 1897 թ.ին բոլոր ուսուցիչներից արդէն 530/0-ը համապատասխան է եղել իր կոչմանը:

Տրանսվաալի վաճառականութիւնն էլ այնքան նախաձեռնի չէ եղել: Այսպէս, 1864 թ.ին ներմուծած է 180,000 ֆունտ ստերլինգ, իսկ արտահանած՝ 133,000 ֆ. 1887 թ. ներմուծած է 1,695,000 ֆ., իսկ 1897—13,564,000 ֆ.: Իսկապէս երկրի տարածութեան հետ համեմատելով, այդ թիւերը շատ չնչին են, բայց եթէ աչքի առնել ունենանք ազգաբնակչութեան նոսրութիւնը, այն ժամանակ պատճառն հասկանալի կը լինի:

Տրանսվաալի ամենամեծ հարստութիւնը ոսկու հանքերն են, բայց դրանք էլ հէնց սկզբից կենտրոնացած են եղել անգլիացի կապիտալիստների ձեռքում եւ շատ օտակա օգուտ են հասցրել տեղական բնակիչներին եւ կառավարութեանը: Այսպէս, 1888-ից մինչեւ 1898 թ.ին այդ հանքերից ստացվել է 1417 միլիոն մարկ զուտ օգուտ, որից կառավարութեան բաժինն է եղել միայն 64 միլիոն:

Հեղինակը բաւական մեծ տեղ է նուիրում եւ բօքրների անցեալ պատմութեանը, կենցաղավարութեանը եւ ժամանակակից հարցերին ու զէպքերին, ուստի եւ նրա աշխատութիւնը միանգամայն բաւարարութիւն կարող է տալ բոլոր այն մարդկանց, որոնց հետաքրքրում է ազատութեան համար նահապետական այդ մի բուռն ժողովրդի անցեալն ու ներկան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Hamb. Nachrichten» լրագիրը Մեծ-Իշխան Ալեքսանդր Միխայլովիչի ուղեւորութեան վերաբերմամբ դէպի Բոլգարիա հետեւեալ դատարարութիւններն է յայտնում. «Եւկարեի է հերբոլ—ասում է լրագիրը—որ առաւական Մեծ-

Իշխանի երեւալ Բոլգարիայում—առաջին անգամ Բոլգարիայի ազատմանից յետոյ—կարող է ամբապնդել ոչ միայն Բոլգարական միջխտութեան խախտող դիրքը, այլ նոյն իսկ Իշխանի զբաղմունքը ի հարկէ, որ առաջ կողմից եւս կարող է ցանկութիւն լինել, որ Մեծ-Իշխանի ուղեւորութիւնը այս հետեւանքն ունենայ: Ռուսաստանը ուզում է վերջնականապէս դադարեցնել Բոլգարո-մակեդոնական խտրիքները, բայց մի եւ նոյն ժամանակ ուզում է խուսափել վշտացնելուց Բոլգարներին, որոնք կարող են պէտք գալ նրան Բալկանեան թերակղզու ապագայ գործերում: Իսկ Ռուսաստանի գլխաւոր նպատակն է զգուշանալ, որ Բոլգարական արտաքին քաղաքականութիւնը չորոնէ ճնոր ճանապարհները: Այս պատճառով հասկանալի չէ ուրեմն, որ առաջ կողմից ջանք է գործ դրվում ամբապնդելու իրերի այժմեան դրութիւնը: Բացի դրանից Պետերբուրգում նշանակութիւն են տալիս եւ այն բանին, որ Modus vivendi հաստատվի Բոլգարիայի եւ Սերբիայի յարաբերութիւնների մէջ, այսինքն այն երկու երկրներին, որոնք անընդհատ մերջում են իրար հետ: Այս հանգամանքի վերաբերմամբ եւս Բոլգարական այժմեան միջխտութիւնը կամենում է համակերպվել Ռուսաստանի ցանկութիւններին:

Շվեյցարիայի հանրապետական խորհուրդը որոշեց արտաքին Շվեյցարիայի սահմաններից թիրք ժողովրդի Ալի-Պարիին, որ, չը նախելով մի քանի անգամ ստացած նախադրույթներին հանրապետական կառավարութեան կողմից, իր միտակամբ ամսագրում, որ հրատարակվում է ժննվում, սպառնական եւ վիրավորիչ յօդուածներ էր տպում թիրքաց սուլթանի եւ նրա կառավարութեան հասցէին:

Անգլիական լրագիրների ասելով բխտանական առեւտրի միջխտութեան հրատարակած վիճակագրական թիւերը ցոյց են տալիս, որ անգլիական առեւտուրը մեծ վնասներ է կրել վերջին վեց ամիսների ընթացքում: Անգլիացիների արտահանութիւնը անկման ճանապարհով վրա է: Համեմատելով անցեալ տարվայ հետ, արտահանութիւնը նուազել է 60 միլիոն ֆրանկով: Առանձնապէս ճնշող ազդեցութիւն է գործում բրիտանական առեւտուրի վրա ամերիկական մրցութիւնը: Եւրոպայի ամերիկացի պողպատավաճառների սինդիկատին՝ անգլիական մետաղագործական արդիւնբերութիւնը 100 միլիոն ֆունտ ստերլինգի վնաս է կրել վերջին մի քանի ամիսների ընթացքում:

«Новое Время» լրագրին հետազոտում են Լեյդսդից, որ իր Եւրոպայի միլիոնատէր բարեգործ Կեյսերին յայտնել է, թէ նա բարեգործական նպատակների յատկացրել է էլի կէս միլիարդ րուբլի, բայց չը գիտէ, թէ ինչպէս բաժանէ այդ գումարը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

5 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Յուլիսի 5-ին Թագաւոր Կայսրը ժամանեց Պետերբուրգ, որտեղ նայեց Կայսր Ալեքսանդր III-ին կանգնեցնելու արձանի աշխատանքները:

ԵԱՄԱՍԵԱՆ-ՊՈԼԵԱՆԱ: Կոմս Տօլստոյի հիւանդութիւնը, բժիշկների ասելով, այլ եւս վրտանց չէ սպանում: Կոմսը հիւանդացաւ յունիսի 27-ին, խոսեւ եղանակին ձիով երկար ման գալուց յետոյ: Առաջին նշանները ցոյց էին տալիս, որ կոմսի հիւանդութիւնը պէվրիտ է: Սկզբում ձեռք առնվեցին տնական միջոցներ, իսկ յետոյ հաւաքովեցին բժիշկներ: Հիւանդի դրութիւնը առանձնապէս վատագուր էր յուլիսի 1-ին արտի գործունէութիւնը կարգապէս թուլացել էր: Յուլիսի 3-ի երեկոյան կոմսը նկատելի կերպով սկսեց լաւանալ: Հիւանդը միշտ էլ կատարեալ գիտակցութեան մէջ էր. նա խօսակցում էր ուրիշների հետ եւ մինչեւ անգամ մի նամակ էր թղթարկել:

ԵԱՄԱՍԵԱՆ-ՊՈԼԵԱՆԱ: Կոմս Տօլստոյի առողջութիւնը բարեւոքեց. տաքութեան աստիճանը բնական է. երակաղարկը լաւ է: Կոմսը լաւ քնեց: Տրամութիւնը կոմս Տօլստոյի հայրենական յուրի տակ փոխվող ուրախութեան եւ յոյսի չուտով կազդուրված առեւելու կոմսի ժակ ունի, լաւ ստամոքս եւ առողջ գործարաններ: Կոմսը գիտէր իր վաճառաւոր դրութիւնը, բայց պահում էր իրան հանգիստ, նրա գիտակցութիւնը պարզ էր: Կոմսը պաւանջում էր ընթերցանութիւն: Վերջին ժամանակ նա պարագայում էր մի հրապարակախօսական աշխատանքով բանուորական հարցի մասին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ: Այն տեղեկութիւնները, թէ բօքրները Փրանկֆուլտին մօտ անգլիութիւններ են գործել, անհիմն են դուրս գալիս: Բօքրները պատերազմի ընթացքում քիչ բա-

ցառութեամբ, միշտ էլ վարվել են մարդավարի եւ մեծահոգութեամբ:

ՌՈՒՍԱՆ ՌՈՍԿԻՍԼԱՅԵՆ չըլանաւ ճանապարհ ընկաւ: Կիւտեցի Նաւահանգստից առաւօտեան ժամի 4-ին:

ՎԻԷՆՆԱ: Առաւօտեան խեղճը ճանապարհ ընկաւ Պարիզ:

ՄԱՐՍԷԼ: «Լաու» շոգենաւի ճանապարհորդները ամի դուրս եկան այսօր առաւօտեան Զիւրիխում: Լազարո եւ Լէօնտիլ արտօնութիւն ստացան շահագործելու ոսկու հանքերը Բարո գետի մօտ: Կարրիքտոն վերադառնում է Եւրոպա, չը սպասելով մինչեւ անգամ, որ սկզբունքով որոշվի սահմանագծի հարցը, որովհետեւ Մենելիքը առաջվայ նման իր պետութեան սահմանը համարում է հարաւային լայնութեան երկրորդ աստիճանը: Լէօնտիլը նորից ուղեւորվեց դէպի արեւադարձային նահանգները:

ՊԵՆԻՆ: Դեսպանները բացայայտ կերպով ընդունում են, որ բանակցութիւնների վերջնալու յոյսերը նուազում են: Դրութիւնը շատ լուրջ է: Ամսից աւելի է, որ գործը կանգնած է նոյն տեղում եւ առաջ չէ գնում: Դեսպանների խորհրդակցութիւնը, որ նշանակված էր այսօր, նորից յետաձգված է, որովհետեւ նրա աննպատակ լինելը ակնհերե է: Մայիսի 29-ին տեղի ունեցած խորհրդակցութեան ժամանակ տարաձայնութիւնները հասան ծայրահեղութեան եւ նրանից յետոյ բանակցութիւնները բոլորովին դադարեցին: Անգլիայի եւ Ռուսաստանի մէջ գլխաւոր տարաձայնութիւնները վերաբերում են վարձատրութեան հատուցման ծրագրի մանրամասնութիւններին: Բոլոր դեսպանները արդէն յունիսի սկզբում համաձայնվեցին իրար հետ մի ծրագրի վերաբերմամբ, որի համար պահանջվում էր միայն կառավարութիւնների հետադարձութիւնը, երբ յանկարծ Անգլիան հրաժարվեց ծրագրից: հատուցելուց, առարկելով, թէ նա պարտաւոր է պաշտպանել իր առեւտրական շահերը: Ձեզօք պետութիւնների դեսպանները ենթադրում են, թէ անհրաժեշտ է, որ Անգլիան կամ Ռուսաստանը էական զիջումն անեն առաջ, քան թէ հնարաւոր կը լինի վերջացնել բանակցութիւնները, իսկ մի եւ նոյն ժամանակ դեսպանները կը մշակեն համեմատաբար ոչ կարեւոր հարցերը, ինչպէս, օրինակ, նաւագնացութեան բարեւոքման հարցը: Եթէ Ֆինանսական հարցը լուծվի, այն ժամանակ բանակցութիւնները կարող են վերջանալ մի օրում: Լիւթուրգանց հարկադրաբար խնդրեց դեսպաններին՝ ներկայացնել խաղաղութեան պայմանների իրականաւոր ծրագրեր: Չինաստանը պատրաստ է ընդունելու բոլոր խնդիր պայմանները բայց նա վերջապէս կամենում է իմանալ, թէ ինչ են կամենում պետութիւնները, որպէս զի հնարաւորութիւն ունենայ ձեռնամուխ լինելու պայմանների իրադրոժման:

ԲԵՐԼԻՆ: «Տէյտէրի գործակալութեան» կողմից Պեկինից ուղարկված հեռագրի աստիճով, թէ բանակցութիւնների վերջնալու յոյսերը նուազում են եւ թէ դրութիւնը շատ լուրջ է, «Norddeutsche Allgemeine Zeitung» նկատում է, որ այստեղ եղած տեղեկութիւններով, զբոսութեան այդ տեսակ նկարագրութիւնը դիտաւորեալ է. բանակցութիւնների այժմեան դրութիւնը, ընդհակառակը, յոյս է տալիս, որ նրանք շուտով եւ բաւարար կերպով կը վերջանան:

ՄՕՍԿՎԱ: Եւրոպայի ճանապարհին, Մոսկվայից 6 վերստ հեռու, չարագործները յարձակում գործեցին Ձե 102 ապրանքատար գնացքի վրա: Չարագործների թիւը հասնում էր 15-ի: Մեքենավարը կանգնեցրեց գնացքը: Թարձակվողներից մէկը, վաղորդական նախագի գիւղացի, 25 տարեկան, բռնված է, մնացածները փախան անտառը: Նախընթաց երեկոյան հէնց նոյն տեղում բէլսների վրա գերան էր դրած:

ԲԵՐԼԻՆ: Յուլիսի 4-ին Նորին Բարձրութիւն Թագաւորանգը ներկայ էր գործը ամի իջեցնելու եւ ծովային թնդանօթային զորաւորների հրաձգութեան զինամարզութիւններին: Երեկոյան 8½ ժամին Նորին Բարձրութիւնը ամի իջաւ: Նրան զիմաւորեցին նահանգապետը, ազնականութեան պարագլուխը, քաղաքագլուխը քաղաքային պատգամաւորութեան հետ, որ աղ ու հաց մատուցեց Նորին Բարձրութեան Ապա Նորին Բարձրութիւնը բաց կառքով նահանգապետի հետ ուղեւորվեց դէպի Ալեքսանդրով-Նեւսկի տաճարը, ուր կատարվեց մաղթանք: Տաճարից Նորին Բարձրութիւնը գնաց զինուորական հիւանդանոցը, ուր խօսակցեց մի քանի հիւանդների հետ: Այնտեղից Նորին

